

ՀԱՅԲԻԶՆԵՍՄԱՆԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ՝ Իրավաբանական ծառայության ավագ իրավախորհրդատուի ներգրավման համար

Աշխատատեղի անվանումը՝ Իրավաբանական ծառայության ավագ իրավախորհրդատու

Աշխատանքային պարտականություններ

- Իրականացնում է իրավաբանական անձ և ԱԶ հաճախորդների վարկի, գրավի, երաշխավորության, երաշխիքի, ֆակտորինգի, ֆինանսական վարձակալության (լիզինգի), ինչպես նաև Բանկի պահանջի զիջման (ցեսիայի) իրավաբանական սպասարկում, այդ թվում՝ դրանց հետ կապված իրավաբանական փաստաթղթերի ուսումնասիրություն, որի վերաբերյալ տալիս է իրավական եզրակացություն,
- Պատրաստում, փոփոխում և լրամշակում է վերոնշյալ վարկային գործիքների հետ կապված պայմանագրերի օրինակելի ձևերը (ներառյալ՝ ապահովման միջոցների պայմանագրերը),
- Պատրաստում/ստուգում է ոչ ստանդարտ պայմանագրեր և հաճախորդներին ուղարկվող տարատեսակ ոչ ստանդարտ ծանուցումներ,
- Մշակում է ավանդային և բանկային հաշվի բացման պայմանագրերի, բանկային քարտերի սպասարկման պայմանագրերի օրինակելի ձևերը, դրանցում փոփոխությունները/լրացումները,
- Տրամադրում է Բանկի մասնաճյուղերին և կառուցվածքային ստորաբաժանումներին խորհրդատվություն,
- Պատրաստում/ստուգում և տրամադրում է լիազորագրեր Բանկի մասնաճյուղերին և կառուցվածքային ստորաբաժանումներին,
- Ներկայացնում է Բանկի շահերը նոտարական գրասենյակում, ՀՀ Անշարժ գույքի կադաստրում, պետական և ոչ պետական մարմիններում և կազմակերպություններում,
- Ուսումնասիրում է վարկային հայտերը, կատարում է իրավաբանական փորձաքննություն և տալիս է եզրակացություն,
- Իրականացնում է վարկի, գրավի, երաշխավորության, երաշխիքի, ֆակտորինգի, ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրերի իրավաբանական սպասարկում,
- Բանկի վարկավորման գործընթացում ցուցաբերում է իրավաբանական օգնություն՝ ուսումնասիրում է վարկային գործարքների հերթական փոփոխությունները և դրանց հետ կապված փաստաթղթերի փաթեթը, որի վերաբերյալ տալիս է եզրակացություն,
- Պատրաստում է վերոնշյալ գործարքների վերաբերյալ և դրանց հետ կապված տիպային պայմանագրերի օրինակները (ապահովում հանդիսացող-գրավ, երաշխավորություն և այլն),
- Բանկի վրա ազդող իրավական ռիսկերի բացահայտում, ամփոփում, վերլուծում և համապատասխան կանխարգելմանն ուղղված միջոցառումների նախագծերի առաջարկում,

- Բանկի ընթացիկ գործունեությանը իրավաբանական բնույթի ծառայությունների մատուցում և նմանատիպ աշխատանքների իրականացում,
- ՀՀ օրենքների, Կառավարության որոշումների, ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերի կիրառման ապահովում,
- ՀՀ գործող օրենքների և իրավական ակտերի ոչ պաշտոնական պարզաբանումների, եզրակացությունների, առաջարկությունների տրամադրում,
- Բանկի կառավարման մարմինների կողմից ընդունվող և ներկայացված ներքին իրավական ակտերի համապատասխանեցումը ՀՀ գործող օրենսդրությանը,
- Բանկային գործառնություններին չառնչվող, Բանկի բնականոն գործունեությանը առնչվող պայմանագրերի, համաձայնագրերի և այլ նախագծերի օրենսդրության համապատասխանեցում, կազմում և նշագրում,
- Կատարված աշխատանքների ամփոփում և հաշվետվությունների կազմում:

Պահանջվող կրթություն և հմտություններ

- Կրթություն՝ բարձրագույն իրավաբանական կրթություն (դիպլոմավորված իրավաբան, մագիստրոսի կոչումը ցանկալի է և կոֆտարկվի որպես առավելություն),
- Աշխատանքային փորձ՝ 3 տարվա մասնագիտական փորձ որպես իրավախորհրդատու, որից առնվազն 2 տարվա մասնագիտական փորձ ֆինանսական կազմակերպություններում,
- Վերլուծական ունակություններ,
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի իմացություն,
- Քաղաքացիական, աշխատանքային, կորպորատիվ իրավունքի գերազանց իմացություն,
- Արագ կողմնորոշվելու, սթրեսային իրավիճակներում զգոնությունը չկորցնելու և որոշումներ կայացնելու ունակություններ,
- Հայերեն (գերազանց), ռուսերեն (լավ), անգլերեն (լավ),
- MS office իմացություն,
- Բանակցություններ վարելու ունակություններ, սկզբունքայնություն և օբյեկտիվություն,
- Հաճախորդների և գործընկերների հետ շփվելու էթիկա,
- Թիմային աշխատանք:

Այս աշխատանքային նկարագիրը ներառում է, սակայն չի սահմանափակվում վերոնշյալ պարտականություններով, և աշխատողը հնարավոր է ստանձնի աշխատանքային անհրաժեշտությունից բխող այլ պարտականություններ:

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 04.12.2022թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Senior Legal Advisor – Name, Surname":

Մրցույթի անցկացման վայրը՝ "ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ Գլխավոր գրասենյակ, ք. Երևան, Նալբանդյան 48: